ՀՏԴ 725.91

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կ.Հ. Քոչար

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ներկայացված են մարդու և թանգարանային ճարտարապետության փոխազդեցությունը, թանգարանի էքստերյերի դերակատարման ժամանակակից ընկալման չափորոշիչները, կրթադաստիարակչական ֆունկցիայի իրականացման նոր ժամանցային եղանակներն ու ձևերը: Դիտարկվում են թանգարանային կառույցին հատկացված հողատարածքի առանձնահատկությունները, թանգարանային շինությունների համար նախատեսված այլ անհրաժեշտ հիմնական գործոնները և նորմատիվները: Ուսումնասիրվում են սրահների նախնական դասավորվածության համար նախատեսված չափանիշները՝ մակերեսների նպատակահարմար հարաբերակցությամբ, սրահների միկրոկլիմային և լուսավորությանը ներկայացվող պահանջները:

Առանցքային բառեր. *թանգարանային ճարտարապետություն, թանգարանային տարածքներ, ցուցադրական տարածք, ցուցանմուշների պահպանություն, կրթամշակութային աշխատանք, թանգարանի ֆունկցիոնալ գոտիներ*

Մարդու և ճարտարապետության փոխազդեցությունը սկսվում է շատ ավելի վաղ, քան այցելուն հայտնվում է թանգարանի կառույցի ներսում և անցում կատարում թանգարանային ցուցադրական տարածք: Դեռ ներս մտնելուց առաջ ճարտարապետական կառույցի էքստերյերը և նրա հարակից տարածքները ստեղծում են ընկալման չափորոշիչներ, թանգարանային տարածքում վարքի ալգորիթմներ և այցելուին ընկղմում մշակույթի աշխարհ: Այսպիսով, ճարտարապետությունը կրթադաստիարակչական ֆունկցիայի շրջանակում դառնում է ներթանգարանային և համամշակութային հաղորդակցային գործիք:

Ժամանակակից պայմաններում այս երկու ֆունկցիաներն էլ նշանակալի փոփոխությունների են ենթարկվում, փոխվում է և դրանց հարաբերակցությունը: Փաստագրական նշանակության զարգացումը թանգարանային ճարտարապետության մեջ արտահայտվում է շենքերի հատակագծման, հավաքածուների պահպանման ու տեղակայման պայմանների, ֆոնդադարանների տեխնիկական հագեցվածության, ժամանակավոր և մշտական ցուցադրությունների սրահների և այս բոլոր բաժանմունքերի փոխկապակցվածության կատարելագործման մեջ: Միևնույն ժամանակ այս ֆունկցիան երկրորդ պլան է մղվում կրթադաստիարակչական ֆունկցիայի կտրուկ զարգացմամբ, որն այսօր առավել լայն կիրառում ունի: Հանրության ցանկություններին և պահանջներին ընդառաջելով, թանգարանն առաջարկում է կրթադաստիարակչական ֆունկցիայի իրականացման նոր եղանակներ ու ձևեր,

հնարավորություն ընձեռելով կրթություն ստանալ ժամանցի միջոցով, թանգարանի այցելությունը դարձնելով ազատ ժամանցի իրականացման ևս մեկ հնարավորություն [1]:

Թանգարանային տարածքների անբավարարությունը մեկն է այն արգելքներից, որոնք խոչընդոտում են թանգարանային գործի պատշաճ իրականացմանը, ներառյալ ֆոնդային գործունեությունը՝ համալրել հավաքածուները, իրականացնել հետազոտական աշխատանք և եթե թանգարանային շենքը չի համապատասխանում որոշակի չափորոշիչների, այնտեղ անհնար է լավագույնս կազմակերպել թանգարանային առարկաների պահպանությունը: Թանգարանային շենքերը պետք է բավարարեն որոշակի չափանիշերի, և դասվում են բարդ, նաև ամենաթանկ իրագործվող շինությունների շարքին: «Թանգարանային կառույց» հասկացությունը շատ լայն է և թանգարանների տեղակայման տարբերակները բազմազան են [2]:

Տարածության կազմակերպման և ձևաստեղծման խնդիրներից բացի ճարտարապետները պետք է լուծեն այցելուների շարժման ուղղության կազմակերպման և հարկային հատակագծման խնդիրները, հաշվի առնելով հետևյալ գործոնները.

- այցելուների քանակի անընդհատ աճը, որոնք երբեմն հեղեղում են որոշ թանգարաններ,
- այցելուների կատեգորիաները՝ ավելի ու ավելի ուշադրություն է դարձվում համշանդամներին, որոնք շենքում տեղաշարժման հատուկ հարմարանքների կարիք ունեն,
- թանգարաններում անցկացվող միջոցառումների բազմազանությունը,
- ցուցադրության կազմակերպման նոր սկզբունքները, որոնք հանգեցնում են այցելուների երթուղու փոփոխության:

Առանձնապես ուշագրավ է թանգարանում մեծ կենտրոնական գոտու ստեղծումը, որը կապված է լինելու բոլոր ցուցադրական տարածքների հետ, ինչպես նաև այցելուի համար այնպիսի երթուղու մշակում, որ նրա մոտ լաբիրինթոսում հայտնված լինելու տպավորություն չստեղծվի: Այս մեթոդները կիրառված են Մեխիկոյի Մարդաբանության ազգային թանգարանում (ճարտ. Ռամիրես Վասկես), Ամստերդամում Վան Գոգի պետական թանգարանում (ճարտ. Գ.Տ. Ռիտվելդ), Վաշինգտոնի Ազգային ցուցասրահի արևելյան մասնաշենքում (ճարտ. Յ. Տ. Պեյ) և այլն:

Այստեղից հետևում է, որ առանձնահատուկ նշանակություն ունի այցելուների ընդունման գոտին, որտեղ նրանք ընտրում են իրենց երթուղին և կենտրոնանում ցուցադրության ընկալման վրա: Թանգարանը վերափոխվում է մշակութային կենտրոնի, որտեղ այցելուների համար ոչ միայն անց են կացվում զանազան միջոցառումներ, ձևավորվում և զարգանում են սոցիալական հարաբերություններ, այլև հաշվի են առնվում զուտ առևտրային և սպառողին ուղղված գործոններ: Արդյունքում աճում է հանրության համար նախատեսված այնպիսի ծառայությունների և գոտիների դերը, ինչպիսիք են՝ խանութները, սրճարանները, ռեստորանները, դահլիճները և այլն:

Թանգարանի գործառույթների բազմազանությունն ու մասնագիտացումը հանգեցրին որոշակի գոտիների ձևավորման, որոնց նկարագրաման համար անհրաժեշտ է նշել դրանց չափերը, տեխնիկական բնութագրերը, ճշտել, թե ինչպես են դրանք կապվում թանգարանի այլ մասերի և միմյանց հետ: Պահոցները և պահեստներն իրենց գործառական յուրահատկությունների շնորհիվ ձեռք են բերել խիստ յուրահատուկ առանձնահատկություններ:

Ցուցանմուշների, լուսավորման սարքերի, օդորակիչների դասավորությունը, նրանց անհրաժեշտ մակերեսները, հարդարման բնույթը ևս որոշվում է թանգարանի կարիքների մանրազնին ուսումնասիրման հիման վրա:

Թանգարանների առաջացման պահից սկսած դրանց գլխավոր առանձնահատկությունը մշտական ցուցադրական գոտու առկայությունն էր: Այսօր գոյություն ունի երկու հիմնական մոտեցում. առաջին դեպքում նախապատվությունը տրվում է ազատ հատակագծմամբ մեծ բաց տարածքներին, ինչը հնարավորություն է տալիս փոփոխել ցուցադությունը, երկրորդ դեպքում՝ մեծ դահլիճներին, նախատեսված որոշակի հուշարձանների տեղակայման համար: Կա և երրորդ, միջանկյալ լուծումը՝ մեծ տարածությունը բաժանվում է ցուցադրության պահանջներին համապատասխան, իսկ ոչ մեծ հուշարձանների համար օգտագործվում են փոքրիկ դահլիճներ:

Ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում ժամանակավոր ցուցադրությունների գոտին, ընդլայնվում են դրա չափերը և բարդանում է տեխնիկական հագեցվածությունը: Այս սեկտորի աճը պայմանավորված է մշակութային փոխանակության զարգացմամբ, հասարակության կողմից հաջողությամբ ընդունվող խոշոր ցուցահանդեսների կազմակերպմամբ:

Քանի որ թանգարանային շինարարության աշխարհագրությունը շատ ընդգրկուն է, նոր շենքերի նախագծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել կլիմայական և ազգային առանձնահատկությունները [3]: Դա կարող է լինել հնագույն, որոշակի պատմական անցյալ ունեցող կառույց, որն արդեն ինքնին ենթակա է պահպանման: Միևնույն ժամանակ այն թանգարան է, նախատեսված իրականացնելու որոշակի գործառույթներ և գլխավոր ցուցանմուշ չի հանդիսանում: Իրականում այն չի կառուցվել հատուկ թանգարանի համար: Որպես կանոն, այդպիսի շենքերի ինտերյերները վերահատակագծվում և վերակառուցվում են, հարմարացվելով թանգարանային պահանջներին: Ամենաբարդ խնդիրն է՝ հարմարեցնել պատմական շենքը թանգարանի, բավարարելով ժամանակակից թանգարանագիտության պահանջները և պահպանելով արժեքավոր պատմական օբյեկտը:

Մյուս դեպքում շենքը կարող է կառուցված լինել հատուկ թանգարանի համար: Սա համարվում է լավագույն տարբերակը, քանի որ վերակոստրուկտավորված շինությունները գործնականում երբեք չեն համապատասխանում թանգարանային շինություններին ներկայացվող պահանջներին: Բայց անգամ այս դեպքում ժամանակի ընթացքում նոր

տարածքների անհրաժեշտություն է առաջանում՝ ֆոնդադարանների, ցուցադրության, այլ կարիքների և հին շենքն այլևս չի բավարարում նոր պահանջներին:

Մեկ այլ դեպքում շենքն ինքը կարող է հանդիսանալ թանգարանային օբյեկտ, որտեղ գլխավոր նպատակն է պահպանել ոչ միայն շենքը, այլև ինտերյերը, այսինքն՝ ողջ համալիրը: Այս դեպքում շենքը կոնսերվացնում են, պահպանում, ուսումնասիրում և այլն: Թանգարանի ուղղվածությունից ու նշանակությունից շատ բան է կախված: Հուշային թանգարանները պահանջում են պատմական, հուշարձանային շենքեր, կապված հուշային անձի հետ:

Թանգարանային շենքերը համարվում են ամենաբարդ տիպի կառույցներ: Համաշխարհային պրակտիկայում թանգարանային շենքի նախագծման մասնակցության հրավեր ստանալը համարվում է ճարտարապետի կամ դիզայների վարպետության ճանաչում: Թանգարանային կառույցի ճարտարապետական նախագծման աշխատանքներին անպայման պետք է մասնակից լինեն նաև թանգարանային աշխատակիցները, որոնց խնդիրն է՝ ստեղծել կառույցի հայեցակարգը, բացատրել պահպանության և ցուցադրանքին առնչվող պահանջները, գրադարանի, ընթերցասրահների, դասախոսությունների անցկացման սրահների տեղակայման նախընտրությունները, հավաքածուի անվտանգության ապահովման պահանջները [2]:

Պետք է հաշվի առնել ապագա թանգարանային կառույցին հատկացված տարածքի առանձնահատկությունները: Շենքը պետք է հասանելի լինի հետիոտնին, հասարակական տրանսպորտի, տուրիստական ավտոբուսների և մասնավոր մեքենաների համար: Հողատարածքը պետք հնարավոր լինի հետագայում վերակառուցել, ընդլայնել, կցակառույցներ ավելացնել: Թանգարանի անվտանգությունն ապահովող ծառայությունները պետք է կարողանան իրենց խնդիրներն անարգել իրականացնել (օր. հասանելի լինեն ջրային ռեսուրսներ հնարավոր հրդեհի դեպքում): Անպայման պետք է հաշվի առնվեն թանգարանային հաստատություններին ներկայացվող անվտանգության պահանջները (մոտակա շենքերի առկայությունը, դրանց տեղակայման հեռավորությունը թանգարանի շենքից, ընդհանուր անցումների առկայությունը): Հաշվի է առնվում նաև տեղանքի հետագա ընդլայնման հեռանկարը (այլ շենքերի շինարարություն, հաղորդակցման ուղիների, նոր ճանապարհների անցկացում, ինչը կարող է ազդել թանգարանային և արտաթանգարանային միջավայրի վրա, թանգարանից կորզել լրացուցիչ ծախսեր անցանկալի հետևանքերը վերացնելիս՝ տատանումներ, ավելորդ աղմուկ, օդի աղտոտվածություն և այլն): Բացի այդ, ճարտարապետական նախագիծը պետք է նախորոշի սրահների նախնական դասավորվածությունը. բոլոր տարածքները բաժանվում են հանրության համար մատչելի և անմատչելի տեսակների, նախտեսված հավաքածուների և դրանց համար չնախատեսվածների: Դա թույլ է տալիս կանխորոշել թանգարանային կառույցում շարժման ուղղորդվածության սխեմաները՝ էքսկուրսիաների և առանձին այցելուների, թանգարանային առարկաների և այլ թանգարանային ձեռքբերումների առաքման, թանգարանային ծառայողների, սարքավորումների, աղբահանության, արտակարգ պատահարների ժամանակ շարժը:

էքսկուրսիաններն ու անհատ այցելուները չպետք է բախվեն այլ հոսքերի, պտտվեն շենքով մեկ, բազմաթիվ անգամներ վերադառնալով նույն սրահները և այլն:

Սրահների նախնական դասավորության ժամանակ պետք է հաշի առնվեն նաև ընդունելի լուսավորության և սրահների լուսավորության անկման ցայտունության մակարդակները, լուսավորման սարքերի ամրացման առանձնահատկությունները: Կարևոր է սրահների պատերի երեսապատման նյութի ընտրությունը՝ այն կարող է լույսի արտացոլման տարբեր աստիճան ունենալ: Հաշվարկված են սրահների միկրոկլիմայի պահանջները՝ խոնավության, ջերմաստիճանի, աղմուկի մակարդակի, օդի ֆիլտրման և այլն, որոնց բավարար մակարդակից էլ կախված է պահպանության ռեժիմի ձևավորումը:

Թանգարանի հատակագծման ժամանակ պետք է հաշվի առնվի, թե մակերեսի որ մասն է հատկացվելու ցուցադրությանը, ֆոնդերին, տեխնիկական սենյակներին, հանգստի գոտուն: Թանգարանագիտական գրականության մեջ հաստատված այդ նորմատիվները բավական ճկուն են: Ըստ լոնդոնյան ազգային պատկերասրահի կողաշենքի հեղինակ Ռ. Վենտուրիի՝ «XIX դարի դասական օրինակներում ցուցադրական տարածք և մնացյալ սրահների մակերեսների հարաբերակցությունը 9:1 էր, մինդեռ այժմ այդ ցուցանիշը 1:2 է» [4]:

Առաջարկվում են հետևյալ չափանիշները. հատկացնել տարածքի 40%՝ հիմնական ցուցադրությանն ու ժամանակավոր ցուցահանդեսներին, 20%՝ ֆոնդերին, պահպանության և վերականգնողական լաբորատորիաներին, 20%՝ գրասենյակներին և սարքավորումներին, 20%՝ հանգստի գոտիներին (սրահներ, սպասասրահներ, լսարաններ, սրճարաններ) [5]:

Պետք է նկատի ունենանալ, որ այս հարաբերացությունը պետք է հաշվի առնի նաև թանգարանի ուղղվածությունը, տեսակը՝ հետազոտական թանգարանները կարող են մեծ մակերեսներով ցուցադրական տարածքների կարիք չունենալ, դրանց հիմնական տարածքները հատկացվելու են ֆոնդերին: Ուսումնական թանգարանները կարիք ունեն մեծ ցուցադրական սրահների, դասախոսական և ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված սրահների և հանգստի գոտիների առանձնապես պահանջ չունեն:

Լուսավորչական, կրթական թանգարաններն ընդհակառակը, կարիք ունեն սրահների, որոնք այցելուին հնարավորություն կտան ոչ միայն նայել, ուսումնասիրել թանգարանային հավաքածուն, այլև հանգստանալ, ուտել, զվարճանալ, այսինքն՝ պետք է նախատեսել այցելուի համար հարմար և բազմաֆունկցիոնալ հանգստի գոտի:

XX դարի թանգարանային ճարտարապետության մեջ տարածում գտան թանգարանային կառույցների երկու հիմնական նախագծեր՝ կենտրոնացված և գծային: Սրանց գաղափարը ծագել էր դեռ նախորդ դարում, բայց իրագործվեց ավելի ուշ: Առաջին տիպի շենքերը կառուցվում են որպես կենտրոնացված շրջանների համակարգ, որն ունակ է այցելուին ուղեկցել ցուցադրությունից ցուցադրություն, աստիճանաբար ավելացնելով և բարդացնելով տեղեկատվության հոսքը (նկ. 1): Այսպիսի կառույցի գաղափարն առաջարկել է Պիտ-Ռիվերսը՝ Ֆարնեմի հնէաբանության և մարդաբանության թանգարանի հիմնադիրը Մեծ Բրիտանիայում:



Նկ.1. Թանգարանային շենքի կենտրոնացված նախագիծ: Սլաքներով նշված է ցուցադրության տարածքով այցելուների շարժման ուղղությունը. – շարժման ուղղություն, – Շենքի հանրությունից առանձնացված մասը՝ ֆոնդային տարածքներ, գրադարան, արխիվ, ուսումնական սենյակներ, վերականգնողական արհեստանոցներ և այլն, – արտաթանգարանային տարածք



Նկ.2. Թանգարանային շենքի գծային նախագիծ:
Տրված են տարբեր խմբերի համար նախատեսված սրահների (էքսպոզիցիոն, հանգստի), հետազոտողների, թանգարանային աշխատողների սենյակները (գրադարան, արխիվ, ուսումնական սենյակներ, վերականգնման արհեստանոցներ)

Բրիտանիայի բնագիտության թանգարանի տնօրեն Գ. Ֆլաուերը պրոպագանդում էր թանգարանային կառույցների գծային տեսակը (նկ. 2), ինչը հնարավորություն է տալիս միմյանցից անջատել ցուցադրության, ուսումնական և գիտական աշխատանքների անցկացման համար նախատեսված շենքի մասերը: Կառույցն իրենից ներկայացնում է երեք մասի բաժանված ուղղանկյուն (նկ. 2): Հանրության համար նախատեսված սրահները դասավորված են ճակատի երկարությամբ: Նրանցից հետ տեղակայված են առանց պատուհանները սրահները՝ նախատեսված ֆոնդերի, պահոցների համար: Շենքի պատուհանապատ ետնամասում տեղակայված են աշխատանքային և ուսումնական սենյակները [1]:

Հատուկ թանգարանների համար նախագծված թանգարանային շենքերից կարելի առանձնացնել հատուկ թանգարանային առարկաների պահպանությանն ու կոնսերվացման համար նախատեսվածները: Այդպիսին է «Վասա» թանգարանը Շվեդիայում՝ 1628թ. կառուցված

և հնագետների կողմից 1956թ. հայտնաբերված շվեդական ռազմանավի կոնսերվացման համար, ինչը հետագայում էլ վերափոխվեց թանգարանի (նկ. 3): Նման կառույցները նման են հսկայական լաբորատորիաների, որոնք բաց են այցելուների համար: Նման համալիրների ստեղծումը միշտ շատ աշխատատար է և ծախսատար [6]:

Նկ. 3. «Վասա» թանգարանը, Ստոկհոլմ՝ հիմնադրված 1990 թ.

Սակայն երբեմն թանգարան կազմավորելու համար բավարար է հատկացնել մի քանի սենյակներ: Սա սովորաբար հարմար է դպրոցներին, համալսարաններին կից ստեղծվող ուսումնական թանգարանների համար, բայց այս դեպքերում էլ է անհրաժեշտ հաշվի առնել թանգարանային շինությունների համար նախատեսված նորմատիվները:

Թանգարանի ճարտարապետական նշանակությունն էական է քաղաքաշինական համալիրների ձևավորման վրա: Թանգարանների քանակի և տիպաբանության բազմազանությամբ, հասարակական և մշակութային կյանքում դրանց դերի փոփոխմամբ պայմանավորված խախտվեց և միանշանակ մոտեցումը դրանց կառուցման հողատարածքների ընտրության հարցում: Հայտնի են քաղաքի սահմաններից դուրս կառուցված թանգարանների բազմաթիվ օրինակներ (ազգագրական, հնագիտական, հուշային), կառուցված գեղատեսիլ վայրերում, ինչը թույլ է տալիս համատեղել այցելուների հանգիստն ու թանգարան այցելելը:

Քաղաքում թանգարանային շենքի կառուցման համար հողատարածքի ընտրության հիմնական պահանջներն են.

- քաղաքի կենտրոնում տեղակայվելը, քանի որ թանգարանները համաքաղաքային համալիրի կերպարի ձևավորման առաջատար օբյեկտներ են: Այս պահանջի իրականացումն ապահովում է թանգարանի տարբեր շրջաններից այցելուների համար մատչելիությունը, այլ մշակութային հաստատությունների՝ թատրոնների, ցուցասրահների, գրադարանների և ժամանցի այլ վայրերի շարքում ընդգրկվելը,
- մոտակա այգու անհարաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա բաց ցուցադրանքեր կազմակերպել, և կհանդիսանա լրացուցիչ ռեկրեացոն գոտի,
- թանգարանի կառուցման և հետագա ընդլայնման համար հողատարածքի բավականաչափ մակերեսի առկայություն:

Այս պահանջները չեն վերաբերում այն թանգարաններին, որոնց տեղակայումը կապված է որոշակի վայրի հետ.

- հուշային թանգարաններ,
- հնագիտական թանգարաններ պեղումների վայրերում,
- ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների և ձեռնարկությունների թանգարաններ,
- բացօթյա թանգարաններ, որոնք կարիք ունեն տվյալ տարածաշրջանին բնորոշ բնապատկերով և մեծ մակերեսով չկառուցապատված տարածքների:

Թանգարանի կառուցման վայրն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հիմնական գործոնները.

- **սոցիալական նպատակները՝** մշակութային ժառանգության պահպանություն և գովազդ, բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացում, գիտական ուսումնասիրությունների իրականացում,
- **թանգարանի նշանակությունն ու յուրահատկությունը՝** թանգարանի տեսակը ընդհանուր կառուցվածքում (կենտրոնական, գլխավոր, մասնաճյուղ), հավաքածուի տեսակը, ֆոնդերը, գործառության հիմնական ուղղվածությունը (հետազոտական, գիտալուսավորչական, կրթական, ժամանցային),
- **քաղաքի բնութագիրը՝** բնակչության թիվը, տեղաբաշխման կառուցվածքը, թանգարանի հնարավոր մակերեսը, տրանսպորտային ցանցը, քաղաքի կամ բնակավայրի զարգացման հեռանկարները, պատմական և մշակութային ավանդույթները, զբոսաշրջության զարգացումը,
- **շրջակա միջավայրը՝** ռելիեֆը, բուսականությունը, ջրամբարները, երկրաբանական բնութագրիչները, կլիմայական պայմանները (ցուցանմուշների պահպանման և բաց ցուցադրանքների կազմակերպման հնարավորության համար), հողտարածքի ձևն ու չափերը, շահագործման սահմանափակումները, ներառյալ աղմուկը, տատանումները և աղտոտվածությունը, տեղանքի հարմարավետությունը բացօթյա ժամանցային միջոցառումների կազմակերպման համար,
- **քաղաքաշինական իրադրությունը՝** այլ թանգարանների, ուսումնական, գիտական հաստատությունների առկայություն (դրանց հզորությունը, տեսակը, տեղադրությունը, քանակը), ժամանցի և հանգստի վայրերը,
- **մոտակա ճարտարապետական շրջապատը՝** թանգարանի համար անբարենպաստ արդյունաբերական հաստատությունների, արագընթաց ճանապարհների, երկաթուղու և օդանավակայանի հարևանությունը,
- **զարգացման հեռանկարները՝** թանգարանային շենքի հետագա, փուլ առ փուլ ընդլայնման հնարավորությունը,

- **բնակչության կառուցվածքը՝** սոցիալ–մասնագիտական և տարիքային խմբավորումը, կրթության մակարդակը, մշակութային պահանջմունքները,
- **տրանսպորտային մատչելիությունը՝** հասարակական տրանսպորտի համակարգը կառուցվելիք թանգարանի շրջակայքում, կայանատեղիների տեղադրությունը. թանգարան հետիոտնի համար հասանելիությունը (համարվում է հեշտ հասանելի՝ 15 *րոպե* հետիոտն կամ հասարակական տրոանսպորտով, հասանելի՝ 15- 30 *րոպե),*
- **տեխնիկատնտեսական չափորոշիչները՝** տարածքի բարեկարգությունը, թանգարանի շինարարությանը զուգընթաց ճանապարհների, հաղորդակցման ուղիների շինարարությունը:

Թանգարանի հողատարածքի մակերեսը կախված է հավաքածուի մեծությունից և բնույթից: Նպատակահարմար է թանգարանային շենքը տեղակայել կառուցապատման կարմիր գծից և քաղաքային մայրուղիներից 15 *մ* հեռավորության վրա՝ կանաչապատ պաշտպանիչ գոտի ստեղծելու կապակցությամբ: Թանգարանի հողատարածքը պետք է հնարավորություն ընձեռի թանգարանային շենքը հետագայում ընդլայնելու:

Մուտքի գոտին ծառայում է այցելուների՝ միջավայրին հարմարվելուն, էքսկուրսիաների կազմակերպմանը՝ թանգարան այցելությունից առաջ, և որպես սպասասրահ: Այստեղ են տեղակայվում գովազդներն ու տեղեկատվությունը: Մուտքի գոտուն մոտ նպատակահարմար է տեղակայել ավտոբուսների և մեքենաների կանգառները:

Ցուցադրական մասը շենքի հիմնական ցուցադրության շարունակությունը և բաց երկնքի տակ ցուցադրություն կազմակերպելու հնարավոր տարբերակ է՝ մունումենտալ արվեստի և քանդակների համար գեղարվեստական թանգարաններում, զինատեսակների, զինտեխնիկայի, հնագիտական մասունքների, ժողարվեստի հուշարձանների, հերոսներին և նշանակալի իրադարձություններին նվիրված հուշակոթողների՝ պատմական պրոֆիլի թանգարաններում:

Հանգստի գոտիները նպատակաուղղված են այցելուների հանգիստն ապահովելու համար:

Տնտեսական գոտին ընդգրկում է շենքից դուրս անհրաժեշտ շինությունները՝ ավտոտնակներ , պահեստներ, տրանսֆորմատորային էլեկտրավահանակներ:

Գիտական աշխատանքի համար նախատեսված տարածքների մակերեսները բաժնի վարիչների համար ընդունվում են 9 *մ²*, գիտաշխատողների համար՝ 4,5*մ²*:

Այժմ լայն տարածում գտած կրթամշակութային աշխատանքը ներառում է ցուցահանդեսների, էքսկուրսիաների կազմակերպում, դասախոսությունների, գիտաժողովների, հանդիպումների, երեկոների, զրույցների անցկացում, ֆիլմերի ցուցադրում, խմբակների աշխատանք, ինչը կանխորոշում է շենքի կառուցվածքում ընդգրկել կինո–դասախոսական և խմբակային դահլիճ: Թանգարանի չափերից կախված, սրահների բնութագրերը տատանվում են ըստ հետևյալի.

- մինչև 200 *մ²* ցուցադրական մակերեսով թանգարաններում առանձնացվում է համապիտանի օգտագործման գոտի այդ մակերեսի վրա,

- մինչև 1500 u^2 ցուցադրական մակերեսով թանգարաններում նախագծվում է կինոդասախոսական դահլիճ 100 տեղի համար,
- մինչև 2500 u^2 ցուցադրական մակերեսով թանգարաններում նախագծվում է կինոդասախոսական դահլիճ 200 տեղի համար,
- մինչև 5000 u^2 ցուցադրական մակերեսով թանգարաններում նախագծվում են երկու դահլիճ՝ կինոդասախոսական դահլիճ 200 տեղի համար և խորհրդակցությունների փոքր դահլիճ 45...60 u^2 մակերեսով, ինչպես նաև սենյակներ խմբակների համար:

Հավաքածուների պահպանությունը ներառում է ցուցանմուշների պահպանությանն ուղղված միջոցառումների անցկացում ցուցասրահներում, բայց առավելապես այն իրականացվում է ֆոնդերում: Թանգարանային ֆոնդը բնութագրվում է ցուցանմուշների քանակական և որակական բազմազանությամբ, իսկ պահպանությունն իրականացվում է ըստ ցուցանմուշների տեսակների: Աշխատանքի հիմնական մասը ցուցանմուշների պահպանությունն ու վերականգնումն է: Թանգարանի մեծությունից և նրա նշանակությունից կախված նախատեսվում է մեկ ընդհանուր վերականգնողական արհեստանոցից մինչև արհեստանոցների և լաբորատորիաների համալիր: Որոշ թանգարաններում նախատեսվում է այցելուներին ևս ցուցադրել վերականգնողների գործունեությունն աշխատանքի ընթացքում, ազատ մուտք դեպի ֆոնդեր և այլն:

Թանգարանային տարածքները բաժանվում են երեք տիպի՝ հիմնական, օժանդակ և ծառայողական, իսկ այցելուների կամ թագարանային աշխատակիցների կողմից առավելապես օգտագործման տեսանկյունից կախված, դրանք բաժանվում են երկու տիպի՝ այցային և ծառայողական (աղյուսակ):

Աղյուսակ

Թանգարանի նախագծման համար առաջարկվող ֆունկցիոնալ գոտիները

№	Տարածքներն ըստ նշանակության	Թանգարանի ֆունկցիոնալ գոտիները	
		այցային	ծառայողական
1.	Հիմնական	Հիմնական ցուցանմուշ, ժամանակավոր ցուցադրություններ	Ֆոնդադարաններ
2.	Օժանդակ	Կինոդասախոսական դահլիճ, խմբակներ, հանգստի գոտի, տեղեկատվական սրահներ	Աշխատակիցների աշխատանքային սենյակներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, գրադարան
3.	Սպասարկող	Նախամուտք, հանդերձարան, բուֆետ, կրպակ, ծխարաններ, սանհանգույցներ	Ծառայողական նախամուտք, տնտեսական պահեստներ, սենյակներ գույքի համար, սանհանգույցներ, տեխնիկական սենյակներ

Հիմնական խմբի տարածքների մակերեսների բաշխումը կախված է թանգարանի ուղղվածությունից, նրա մեծությունից և նշանակությունից: Մակերեսների մոտավոր հարաբերակցություններն են. ցուցադրական դահլիճներ 45…55 %, ֆոնդադարաններ՝ 20…25 %, օժանդակ և ծառայողական սենյակներ՝ 25…35 % [7]:

Թանգարանային շենքերի նախագծման բարդությունները կապված են նաև սրահներում համապատասխան միկրոկլիմայական պայմանների ապահովման հետ: Դրանց առաջադրվող պահանջները շատ խիստ են. բոլոր այն թանգարանային սրահները, որտեղ ցուցանմուշներ են ներկայացված, կարիք ունեն օդորակման առանձին համակարգի, ինչպես նաև օպտիմալ ջերմախոնավային ռեժիմ ապահովող համակարգի: Մինչդեռ սպասարկման սենյակները կարող են ապահովվել օդորակիչներով և ջեռուցման համակարգերով, որոնք կիրառվում են այլ հասարակական վայրերում:

Այսպիսով, թանգարանի նախագծում սրահների կազմի որոշումը և դրանց ներկայացվող պահանջների հաշվառումը թանգարանների և թանգարանային համալիրների նախագծման կարևորագույն խնդիրներից են [8] :

Այս ամենից բացի, թանգարանների նախագծումն ընդգրկում է այլ բազմաթիվ աշխատանքներ, ինչպիսիք են՝ թեմատիկ և ցուցադրական պլանի մշակում, աշխատանքային փաստագրություն, ճարտարապետաշինարարական նախագիծ, ցուցադրության ձևավորման էսքիզային նախագիծ, թանգարանային կահավորանքի նախագծում և այլն:

К.А. Кочар

ОСНОВНЫЕ ТРЕБОВАНИЯ К ПРОЕКТИРОВАНИЮ МУЗЕЙНЫХ ЗДАНИЙ

Представлены взаимосвязь человека и музейной архитектуры, критерии современного восприятия роли экстерьера музея, новые виды и методы осуществления просветительских и образовательных функций. Рассматриваются требования к выбору участка под здание музея, другие необходимые нормативы, факторы, предусмотренные для музейных зданий.

Анализируются нормы предварительного устройства помещений с целесообразным соотношением площадей, с требованиями по обеспечению микроклимата и освещения в музейных помещениях.

***Ключевые слова**: музейная архитектура, музейные помещения, экспозиционная зона, хранение экспонатов, просветительно-образовательная работа, функциональные зоны музея*

K.H. Kochar

BASIC REQUIREMENTS FOR THE DESIGN OF MUSEUM BUILDINGS

The interaction between museum architecture and man, new contemporary meaning of the museum exterior's rising role, new entertainment methods and ways for educational programs realization in the museums are presented. The environmental standards and features of the land allocated for museum

building, other important normatives and exceptional factors intended for the museum constructions are observed .

The normatives of preliminary alignment of museum halls are analyzed, especially appropriate and optimal ratio of their surfaces, also necessary and important requirements for providing hall's optimal lighting design /illumination/ and microclimate conditions are observed.

***Key words**: museum architecture, museum halls, exposition area, artworks preservation,educational programs, museum functional zones*

Գրականություն

1. http://abc.vvsu.ru/Books/muzeebed/page0011.asp#xex17-.
2. Реставрация музейных ценностей. Научные и практические работы // Труды ГИМ. – М., 1999. - Вып. 107.
3. Архитектура музея: поиски нового образа // Museum. - М., 1990. - № 2.
4. **Романова Н.М.** Этнографические материалы в экспозициях краеведческих музеев России. – СПб., 2001.
5. **Рубан Н.И.** История музейного строительства на советском Дальнем Востоке 20-30-х гг. XX века: Автореф. дис. ... канд. ист. наук. – Хабаровск, 2001.
6. **Fulvia Premoli.** Linguaggi Dell'allestire Oggi// Corso di formazione permanente - Museografia e Allestimento. - Yerevan, 2012. – N 4/10 ottobre. - P. 16-17.
7. Рекомендации по проектированию музеев. - М.: Стройиздат, 1988. - URL: http://document.ua/rekomendacii-po-proektirovaniyu-muzeev-nor8625.html.
8. http://museum-design.com.ua/news/12-museum-project-and-structure-of-premises.

***Քոչար Կարինե Հայկազի** (ՀՀ, ք. Երևան) - «Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ, ցուցադրության և հանրահռչակման բաժնի վարիչ, (+374) 1058 06 05; (+374) 9336 39 86; kochar742002@yahoo.com:*

***Кочар Карине Айказовна** (РА, г. Ереван) -"Музей Ерванда Кочара", руководитель отдела экспозиции и пропоганды, (+374) 1058 06 05; (+374) 93 36 39 86, kochar742002@yahoo.com.*

***Kochar Karine Haikaz,** (RA, Yerevan) - "Ervand Kochar Museum" Deputy Chief of Expositions & Propaganda Department, (+374) 1058 06 05; (+374) 9336 39 86, kochar742002@yahoo.com.*

Ներկայացվել է՝ 27.02.2015թ.
Ընդունվել է տպագրության՝ 03.03.2015թ.